ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«01» ապրիլ 2024թ.

ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 2-րդ շենք
Հեռ. (+37412) 27-27-27

«ԱԳԱՍՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՏԻԿԻՆ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մուրադյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 26.03.2024թ. ուղարկված գրության և ծանուցման փոխարեն համակարգչի տեխնիկական խնդիրների պատճառով Ձեզ պետք է ուղարկվեր սույն գրությանը կից ծանուցումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ ԱՐԱՐԱՏ ՆԱՀԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«01» ապրիլ 2024թ.

ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 2-րդ շենք
Հեռ. (+37412) 27-27-27

«ԱԳԱՍՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՏԻԿԻՆ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Ծանուցում

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ -ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 2-ին կնքված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) շրջանակներում «Ագաստ» ՍՊԸ-ն խախտել է կողմերի միջև կնքված Պայմանագրի 2.1.1 կետով սահմանված պահանջը՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, 2.1.7.1 (բ) կետով սահմանված պահանջը՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7 կետը՝ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 2024թ. փետրվարի 23-ին միակողմանի լուծել է ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ -ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 2-ին կնքված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5» ծածկագրով պայմանագիրը:

Կնքված պայմանագրի լուծման համար հիմք է հանդիսացել պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի՝ տիկին Գ. Վարդազարյանի տնօրենին ուղղված զեկուցագիրը, առ այն, որ «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/1-5» ծածկագրի մասով առաջին պատվերը էլեկտրոնային ուղարկվել է 2024թ. փետրվարի 2-ին, ընդ որում պատվերը իրականացվել է նաև բանավոր , հեռախոսազանգի միջոցով, հետագայում նույն եղանակով պատվեր տրվել է 2024թ. փետրվարի 13-ին: Մատակարարումը պատվիրատուի կողմից չի իրականացվել պայմանագրով սահմանված ժամկետներում, ընդ որում առաջին պատվերը իրականացվել է մասնակի, 2-րդ պատվերը, որը ըստ պայմանագրի պետք է իրականացվել 3 աշխատանքային օրվա մեջ, ընդհանրապես չի իրականացվել:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ընկերության տնօրենը հիմք ընդունելով իր պատճառաբանված որոշմամբ սահմանել է, որ «Ագաստ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված իր ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչպես նաև հաղթող ընկերությունը չպահպանելով հրավերի 8.14 կետը, տուժանքի ձևով վճարումը չիրականացման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարության (ծանուցումը) հրապարակվելու օրվան հաջորդող տասներորդ օրը, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազոր մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ ՎԱՀՐԵՆ ՆԱՀԻՆՅԱՆ